

ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

ՄԼ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌՈՒՏՈՆԼՖ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻՆ ՀԵՏ

Իրաւ անգակակալ մըն էր: Աւելի քան 25 տարիներէ ի վեր չէիմ տեսնուած: Մեր ուսանողական օրերուն, Երեւան, յաճախակի հանդիպումները մեր դարձած էին պատմութիւն, երբ Հայաստանի մէջ Գկարչութիւնը կ'ապրէր ճոր վերածնունդ մը: Վաթսուական թուականներուն էր:

Նորերուն մէջ ճոր մըն ալ, խանդավառ ճոր մը, ինչպէս բոլոր ճորերը՝ Ռուտով Խաչատուրեանը, քիչ մը լռակեաց, սակաւախօս, որ հանդէս կու գար ԴԻՄԱՆՎԱՐՆԵՐՈՎ եւ ՆԱԹԻՐԻ ՄՈՐԱԹԵՐՈՎ, մէկը վերջապէս, որ սիրահարը չէր ճշման գոյներու, մէկը, որ խօսքէ աւելի ունէր խոր, կարծեք կեանքը ըլլար ովկիանոս եւ ինքը՝ սուգանաւ կիկլոպեան աչքերով քննելու, վերլուծելու համար ինչ որ կար որպէս գաղտնիք այդ կեանք ովկիանոսի ջուրերուն մէջ ու ջուրերէն վար:

Չենք գիտեր բաժնուցեցա՞ւ, թէ բազմապատկուեցաւ Գկարիչ Ռուտովի կեանքը: Բայց, որ այդ կեանքը սկսաւ Երեւանի մէջ, այդ փաստ է:

Ռուտով Խաչատուրեանը ծնած է 4 Մարտ 1937ին, Երեւան: Յիշարժան թուական մը չէ այս մէկը, բայց այս ծնունդով մենք ունենցանք յիշարժան Գկարիչ:

Ռուտովի երկրորդ ծնունդը 1951 թուականին կը զուգահիշէ երբ ինք պատանի, Երուանդ Զոհարին կ'աշակերտէ: Փարիզ, «Նկարչութիւն Տարածութեան մէջ» դպրոցին հիմնադիրը մեծ ազդեցութիւն կը գործէ պատանի Ռուտովի վրայ: Եւ ինչպէս մեր մանկութիւնը մեզի հետ կ'ըլլայ մեր կեանքի բոլոր օրերուն մէջ, այդպէս ալ Զոհարը Ռուտովի մէջ ներկայութիւն կը մնայ մինչեւ այսօր:

Մեր լոնտոնեան հանդիպումին ընթացքին առաջին խօսքերը մեր դարձաւ Երուանդ Զոհարին եւ մեծաբերեց: Մոսկու-

պահէ հայ Գկարիչը եւ որոնց լոնտոնին փնտռողները մենք կը տեսնենք իր պատահներուն վրայ, ուր մանուկը մօրը մէկ մասըն է, անբաժան մասը. իրմէ, իր մէջ, իր շարունակութիւնը, շարունակելիութիւնը:

Գառգու, այլ վարպետ մը, ան եւս անցրպետի խուզարկու, ան եւս մարդկային քաղաքակրթութեան, մեծագործութեանց կորուստին վախովը պարող արուեստագէտ. երբ ներկայ կ'ըլլայ Ռուտով Խաչատուրեանի Մոսկուայի անհատական ցուցահանդէսին, 21 Յունիս 1984, կը գրէ. «Մեծապէս երջանկացայ դիտելով Ռ. Խաչատուրեանի գործերը»:

Շատեր գրած են այս հայ արուեստագէտի մասին հայ, ռուս, վրացի, անգլիացի թէ ամերիկացի: Եւ կարծեք բոլորը խօսքը մէկ ըրած փնտռած են գովեստի ճոր խօսք, խօսք որ ըսած ըլլան ուրիշները:

Դուք կրնաք Ռուտովի գործերուն հանդիպիլ Մոսկուայի Թրէթիաքովի անուան պատկերասրահին, Երեւանի ժամանակակից Արուեստի Թանգարանին եւ Անգլիոյ, Գերմանիոյ, Ամերիկայի եւ այլ երկիրներու անհատական հաւաքածոներուն մէջ:

1955ին առաջին անգամ խմբական ցուցահանդէսի մասնակցող այս արուեստագէտը, 1959ին պրոնգէ մետալ կը ստանայ Վիեննայի մէջ, 1965ին արծաթ մետալ, Երեւանի մէջ, 1969ին կ'արժանանայ առաջին մրցանակին դարձեալ Երեւանի մէջ երբ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 100ամեակին առիթով պատանի կը բերէ հայ երաժշտութեան Սիպեիոսին դիմակարը:

Այնուհետեւ, խմբական թէ անհատական ցուցահանդէսներով կը ներկայանայ Փրակայի, Պերլինի, Փարիզի, Մոսկուայի, Լեմինկրպտի, Տիբորյոյի, Նիւ-Եորքի, Լոս Անճելեսի եւ այլ քաղաքներու անուեստասէր հասա-

մեր օգնութեան, առանց մեր օգնութեան հատուցած է, ուրեմն պիտի ծնի:

Այնուհետեւ մեզի միւթ կը դառնայ Արարատը: Տես, կ'ըսէ Ռուտով, Ահա Մեծ Մասիսն ու Փոքր Մասիսը, մայր ու որդի, մեծը եւ փոքրը միշտ կողք-կողքի, որպէս յախտնութեան նըշան: Նայիր Հայոց Եկեղեցիին, անոր գմբէթին, անոր զանգակատան, Արարատներ եւ, որոնք կոչեր են մեզի համար բարձրանալու, խոնարհումով բարձրանալու կոչեր: Իմ արմատներս հոն են, Հայոց Եկեղեցիին եւ անոր զանգակատան մէջ:


Արդէն հասկցանք, որ Ռուտովը պլաստիկ միջոցներով կը ստեղծէ, կը ստեղծագործէ եւ կեանք կու տայ իրմէ վեր ցայտող գաղափարներու:

Այդ օր, ահա իր ուրիշ մէկ խօսքը. «Հայ լինելը ողբերգութիւն է եւ միաժամանակ՝ հպարտութիւն»:

Ռուտով Խաչատուրեանին ուսուցիչը Զոհարէն ետը ու Զոհարէն առաջ եղած է ու կը մնայ բնութիւնը: Ան չի ձգտիր փոխել կամ գեղեցկացնել բնութիւնը այլ կը փորձէ հասկնալ եւ խորանալ այն հրաշքին մէջ, որ բնութիւնն է:

Թարմութիւն կը բուրեն իր գործերը. որովհետեւ Ռուտովը միշտ հաւատարիմ է իր անձին, ներքին մարդուն, Հայ Եկեղեցիի զանգակատունէն ծնած իր հոգիին: Այլապէս, ինչպէ՞ս, ինչո՞ւ բացատրել իր հոգակի հասնիլը օտար երկրներու տակ:

Եթէ Ռուտովը Գկարէր անգլիացիի կամ ամերիկացիի եւ կամ ֆրանսացիի մը մամն, անց պիտի ըսէին-մենք քեզի



պէս շատեր ունինք: Բայց Ռուտով Խաչատուրեանը երբ ներկայացուց իր երկիրին ոգին, անոր ըսին դու՛ն ճոր ես, դու՛ն մեր օրերու Ռոնեսանսն ես-վերածնունդը:

Միթէ նոյնը չըսի՞մ ամերիկացիք Արշիլ Կորքի-Ադոյեանի մասին:

Մենք մէկ քանի ժամ միասին էինք Ռուտով Խաչատուրեանի լոնտոնեան արուեստանոցին մէջ, ուր տարբեր սեռեակներէն մեզի կը ճաշէին Գկարիչին յախտնութիւնը բացատրող գործերը, ուր մենք ներկի հոտին փոխարէն մեզ կը զգայինք այլութեան մը բնակիչները արուեստի թեւերուն ապաւինած:

Ռուտով, այդ օր մեր խօսակցութեան ընթացքին կը փնտռէր իր հիմ օրերը, Երեւանը կը փնտռէր, Մոսկուան կը փնտռէր. այդ յայտնի եղաւ, երբ ոտքի ելելով ըսաւ. «Պիտի վերադառնամ, հոս ջերմութիւն չկայ, Մոսկուայի եւ Երեւանի ցուրտին մէջ արեգակներ կան...»:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
Հալէպ, 29 Հոկտեմբեր 1995

ՌՈՒՏՈՆԼՖ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԷՆ ՆՄՈՅՇՆԵՐ

Հայ Եկեղեցւոյ պաշտօնական կարեւոր անձնակազմի մասնաւորութիւնը, որի հիմնական տր Կոնաքերութիւնն է, նուէր մատուցելու ու ալ իրն ողորմութիւն անէ տաղի արարողութիւնը տուկ է միայն Հայ Եկ գրութիւնն է ունեցել դէռ գոր Լուսաւորչի ժաման նոր Գլակն իր «Պատ Տարօնոյ» (Երեւան 1941 տուրեան մէջ վկայում է ների դէմ տարած յաղթ յետոյ Տրդատ թագաւոր յոյ իշխանները Ս. Գրիսաւորչի առաջնորդոյ Տարօնի Ս. Կարապետ Կոնոողութիւն են մատու կենդանիներ ու բաժան Հայ Եկեղեցւում տոկորո իր յիշատակներին Ս. Խ ներով, Կիրակի օրերին տոյ մատաղ անէլ, որպ թեամբ Քրիստոսի մար միջապէս անսուրբ կեր օրինուած միս ուտեն եւ Մատաղն արում է տ ա) Ռուէ փորձանքի ներու առթիւ Մատոնս վ բ) Իրեւ բարեխօսուր տուրեան համար: գ) Մատոնց փրկութի մար եւ այլն: Մատաղը երկու նիւթ կենդանին կարող է եւ այլն: Այսօր ընդունու թէեւ հնում ընդունելի է Տարօնացին իր «Ընդդէ (4. Պոյիս 1752) հակաճա էգ՝ ոչ է խոտելի» (էջ 279 տղ նուէր է, ապա պէտք հապտաների օրինակով խեղանդամուած արատ նել: Մատաղի միւսը չի ալ նոյն օրը պէտք է ս է 40 ընտանիքի բաժան խարի դէպքում՝ 7 ընտա նախընտրելի է ոչ թէ մո, եթէ մատաղն օրինու հնագոյն կանոնների, մոյ Մատաղի երկրորդ նյ գոր Տաթեւացին «Գիրք տաղ» բառը ստուգաբան տաղի աղը պէտք է օր մատաղը՝ կուրքերին մս

Կրթ. առ. Կ. Կ. Կ. Կ.